Հովհաննես Թումանյան

Պոչատ աղվես

Լինում է, չի լինում՝ մի պառավ . էս պառավն իր էծը կթում է, կաթը վեր դնում, գնում է ցախ ու փետ բերի, որ կրակ անի, կաթն եփի:

Մի աղվես գալիս է, գլուխը կոխում կաթնի ամանը, ուտում:

Պառավը վրա Է հասնում, ցաքատով տալիս է, աղվեսի պոչը կտրում:

Պոչատ աղվեսը փախչում է, գնում է մի քարի վրա կանգնում ու էսպես խնդրում .

- Տատիկ, տատիկ, պոչս տուր, կցեմ, կցմցեմ, գնամ ընկերներիս հասնեմ, որ ինձ չասեն՝ պոչատ աղվես, ո՞րտեղ էիր:

Պառավն ասում է .

- Դե գնա իմ կաթը բե՛ր:

Աղվեսը գնում է կովի մոտ:

- Կովիկ, կովիկ, կա՛թ տուր ինձ, կաթը տանեմ պառավին տամ, պառավը պոչս տա, կցեմ, կցմցեմ, գնամ ընկերներիս հասնեմ, որ ինձ չասեն՝ պոչատ աղվես, ո՞րտեղ Էիր:

Կովն ասում է .

- Դե գնա ինձ համար խո՛տ բեր:

Աղվեսը գնում է արտի մոտ:

- Արտիկ, արտիկ, խո՛տ տուր ինձ, խոտը տանեմ կովին տամ, կովը ինձ կաթ տա, կաթը տանեմ պառավին տամ, պառավը պոչս տա, կցեմ, կցմցեմ, գնամ ընկերներիս հասնեմ, որ ինձ չասեն՝ պոչատ աղվես, ո՞րտեղ էիր:

- Դե գնա ինձ համար ջուր բեր: Աղվեսը գնում է աղբյուրի մոտ:

-Աղբյուր, աղբյուր, ջո՛ւր տուր ինձ, ջուրը տանեմ արտին տամ, արտը ինձ խոտ տա . խոտը տանեմ կովին տամ, կովը ինձ կաթ տա . կաթը տանեմ պառավին տամ, պառավը պոչս տա, կցեմ, կցմցեմ, գնամ ընկերներիս հասնեմ, որ ինձ չասեն՝ պոչատ աղվես, ո՞րտեղ էիր:

Աղբյուրն ասում է .

- Դե գնա կուժ բեր:

Աղվեսը գնում է աղջկա մոտ:

- Աղջիկ, աղջիկ, կո՛ւժդ տուր, կուժը տանեմ աղբյուրին տամ, աղբյուրը ինձ ջուր տա . ջուրը տանեմ արտին տամ, արտը ինձ խոտ տա . խոտը տանեմ կովին տամ, կովը ինձ կաթ տա . կաթը տանեմ պառավին տամ, պառավը պոչս տա, կցեմ, կցմցեմ, գնամ ընկերներիս հասնեմ, որ ինձ չասեն՝ պոչատ աղվես, ո՞րտեղ էիր:

- Դե գնա ուլո՛ւնք բեր ինձ համար:

Աղվեսը գնում է չարչու մոտ:

- Չարչի, չարչի, ուլո՛ւնք տուր, ուլունքը տանեմ աղջկան տամ, աղջիկը ինձ կուժ տա . կուժը տանեմ աղբյուրին տամ, աղբյուրը ինձ ջուր տա . ջուրը տանեմ արտին տամ, արտը ինձ խոտ տա . խոտը տանեմ կովին տամ, կովը ինձ կաթ տա . կաթը տանեմ պառավին տամ, պառավը պոչս տա, կցեմ, կցմցեմ, գնամ ընկերներիս հասնեմ, որ ինձ չասեն՝ պոչատ աղվես, ո՞րտեղ էիր:

Չարչին ասում է .

-Դե գնա ինձ համար ձո՛ւ բեր:

Աղվեսը գնում է հավի մոտ:

- Հավիկ-հավիկ, ձու-ձու տուր, ձու-ձուն տանեմ չարչուն տամ, չարչին ինձ ուլունք տա . ուլունքը տանեմ աղջկան տամ, աղջիկը ինձ կուժ տա . կուժը տանեմ աղբյուրին տամ, աղբյուրը ինձ ջուր տա . ջուրը տանեմ արտին տամ, արտը ինձ խոտ տա . խոտը տանեմ կովին տամ, կովը ինձ կաթ տա . կաթը տանեմ պառավին տամ, պառավը պոչս տա, կցեմ, կցմցեմ, գնամ ընկերներիս հասնեմ, որ ինձ չասեն՝ պոչատ աղվես, ո՞րտեղ էիր:

Հավն ասում է . - Դե գնա ինձ համար կո՛ւտ բեր:

Աղվեսը գնում է կալվորի մոտ:

- Կալվոր, կալվոր, կո՛ւտ տուր ինձ, կուտը տանեմ հավին տամ, հավը ինձ ձու տա . ձուն տանեմ չարչուն տամ, չարչին ինձ ուլունք տա . ուլունքը տանեմ աղջկան տամ, աղջիկը ինձ կուժ տա . կուժը տանեմ աղբյուրին տամ, աղբյուրը ինձ ջուր տա . ջուրը տանեմ արտին տամ, արտը ինձ խոտ տա . խոտը տանեմ կովին տամ, կովը ինձ կաթ տա . կաթը տանեմ պառավին տամ, պառավը պոչս տա . կցեմ, կցմցեմ, գնամ ընկերներիս հասնեմ, որ ինձ չասեն՝ պոչատ աղվես, ո՞րտեղ էիր:

Կալվորի մեղքը գալիս է, մի բուռն կուտ է տալի: Աղվեսը կուտը տանում է հավին, հավը ձու է տալի . ձուն տանում է չարչուն, չարչին ուլունք է տալի . ուլունքը տանում է աղջկան, աղջիկը կուժ է տալի . կուժը տանում է աղբյուրին, աղբյուրը ջուր է տալի . ջուրը տանում է արտին, արտը խոտ է տալի . խոտը տանում է կովին, կովը կաթ է տալի . կաթը տանում է տալի պառավին, պառավը պոչը տալիս է իրեն . կցում է, կցմցում, վազում է գնում, իր ընկերներին հասնում: